

Կոմիսիոն հիմունքով վաճառքի հանձնված արտադրանքի և ապրանքների հաշվառումը

Կոմիսիոն հիմունքով վաճառքի հանձնված արտադրանքի և ապրանքների (այսուհետև ապրանք) օրենսդրական կարգավորումն իրականացվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 791-805 հոդվածներով:

Կոմիսիոն հիմունքով ապրանքի վաճառք իրականացնելու համար անհրաժեշտ է կնքել կոմիսիայի պայմանագիր (այսուհետև պայմանագիր), համաձայն որի մի կողմը (կոմիսիոները) պարտավորվում է մյուս կողմի (կոմիտենտի) հանձնարարությամբ, վարձատրությամբ, իր անունից, սակայն կոմիտենտի հաշվին, կնքել մեկ կամ մի քանի գործարք:

Կոմիտենտի կողմից պայմանագրով կոմիսիոներին հանձնված ապրանքի գծով իրացումից հասույթը, հետևաբար և հարկերի առաջացումը, ճանաչվում է, երբ վերջինիս կողմից ապրանքը վաճառվել է երրորդ անձանց:

Պայմանագիրը կարող է կնքվել դրա գործողության որոշակի ժամկետում կամ առանց ժամկետի, դրա կատարման տարածքի նշումով կամ առանց դրա, ի շահ կոմիտենտի և նրա հաշվին այնպիսի գործարքներ կնքելու իրավունքը երրորդ անձանց չտրամադրելու կոմիտենտի պարտավորությամբ, որոնց կնքելը հանձնարարված է կոմիսիոներին, կամ առանց նման պարտավորության՝ կոմիսիայի առարկա ապրանքի տեսականու վերաբերյալ պայմաններով կամ առանց պայմանների:

Պայմանագիրը սահմանում է կոմիտենտի կողմից կոմիսիոներին վարձատրությունը, իսկ այն դեպքում, երբ կոմիսիոները երաշխավորություն է ստանձնել գործարքը երրորդ անձի կողմից կատարելու համար (դեկրեդերե)՝ նաև լրացուցիչ վարձատրել պայմանագրով սահմանված չափով ու կարգով: Կոմիսիոն վարձատրության (կոմիսիոն վճար) չափը կարող է սահմանվել որպես վաճառքի գումարից որոշակի տոկոս, յուրաքանչյուր ապրանքի միավորի համար՝ որոշակի գումար և այլն: Եթե պայմանագրով նախատեսված չէ վարձատրության չափը կամ այն վճարելու կարգը, ապա կոմիսիոները վարձատրվում է պայմանագիրը կատարելուց հետո այն գնով, որը սովորաբար գանձվում է նույնանման ծառայության համար:

Երբ կոմիսիոները գործարքը կնքել է կոմիտենտի նշած պայմաններից ավելի ձեռնառու պայմաններով, լրացուցիչ օգուտը կոմիտենտի և կոմիսիոների միջև բաշխվում է հավասարաչափ, եթե այլ բան նախատեսված չէ կողմերի համաձայնությամբ:

Պայմանագրով կարող է նախատեսվել նաև կոմիսիոների կողմից այլ անձի հետ ենթակոմիսիայի պայմանագրի կնքումը, որի դեպքում կոմիսիոները ձեռք է բերում կոմիտենտի իրավունքներ և պարտականություններ:

Կոմիսիոները կարող է ապրանքը վաճառել կոմիտենտի հետ համաձայնեցված գնից ցածր գնով՝ փոխհատուցելով գների տարբերությունը, եթե չի ապացուցում, որ ինքը հնարավորություն չի ունեցել գույքը վաճառել համաձայնեցված գնով և, որ այն ավելի ցածր գնով վաճառելը կանխել է կոմիտենտին պատճառվելիք ավելի մեծ վնասները :

Կոմիտենտից կոմիսիոներին փոխանցված կամ կոմիտենտի հաշվին կոմիսիոների ձեռք բերած ապրանքը կոմիտենտի սեփականությունն է, որի գծով պայմանագրով կարող է սահմանվել կոմիսիոների կողմից որոշակի ժամանակահատվածի (սովորաբար ամսվա) համար ապրանքադրամական հաշվետվության ներկայացումը: Կոմիտենտը այդ ապրանքը հաշվառում է 2153 «Կոնսիգնացիոն և կոմիսիոն հիմունքներով վաճառքի հանձնված արտադրանք» և 2164 «Կոնսիգնացիոն և կոմիսիոն հիմունքներով վաճառքի հանձնված ապրանքներ» երկրորդ կարգի հաշիվներով, իսկ կոմիսիոները՝ 924 «Հանձնուրդի (կոմիսիայի) և հանձնարարության (կոնսիգնացիայի) պայմանագրերով ընդունված ապրանքներ» արտահաշվեկշռային առաջին կարգի հաշվով:

Կոմիտենտից կոմիսիոներին ապրանքի հանձնումը իրականացվում է ապրանքի կոմիսիոն հիմունքներով վաճառքի հաշիվ-ապրանքագրով, որում կարող են նշվել կոմիտենտի և կոմիսիոների ֆիրմային լրիվ անվանումը, սպասարկող բանկի անվանումը, հաշվի համարը, իրավաբանական հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, ապրանքների առաքման և ստացման վայրերի հասցեները, ապրանքի անվանումը, չափի միավորը, քանակը, սահմանված վաճառքի գինը և գումարը՝ առանց նշելու ավելացված արժեքի հարկի գումարը (որովհետև չի կատարվում սեփականության իրավունքի օտարում՝ հետևաբար և չի առաջանում հարկվող շրջանառություն), պատասխանատու անձանց պաշտոնները, անունը և ազգանունը և այլ վավերապայմաններ:

Պայմանագրով սահմանված ժամկետում կոմիսիոները կոմիտենտին է ներկայացնում հաշվետվություն վաճառված ապրանքի անվանման, քանակի, գնի և գումարի վերաբերյալ: Լրացվում են նաև վերևում նշված և հայտարարության համար անհրաժեշտ վավերապայմանները (մասնավորապես այնպիսիք, որոնք պարտադիր են հարկային հաշիվ ծառայելու համար): Հաշվետվության վերաբերյալ առարկություններ ունեցող կոմիտենտը պարտավոր է հաշվետվություն ստանալուց հետո՝ երեսուրյա ժամկետում, այդ մասին հայտնել կոմիսիոներին, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Հաշվետվության մեջ նշվում է վաճառված ապրանքի ընդհանուր գումարը առանց ավելացված արժեքի հարկի, ավելացված արժեքի հարկի գումարը և ընդհանուր գումարը: Սրանցից առաջինը կոմիտենտը ձևակերպում է որպես իրացումից եկամուտ, երկրորդը՝ հարկային պարտավորություն, իսկ երրորդը՝ դեբիտորական պարտք:

Հաշվետվությունում նշվում է նաև կոմիսիոն վարձատրության չափը՝ առանց ԱԱՀ-ի, ԱԱՀ-ի գումարը և ընդհանուր գումարը: Կոմիտենտը դրանք ձևակերպում է համապատասխանաբար որպես կոմիսիոն վճարների գծով ծախս, հաշվանցման (փոխհատուցման) ենթակա ԱԱՀ և կոմիսիոնների գծով դեբիտորական պարտքի նվազեցում, իսկ կոմիսիոնները՝ համապատասխանաբար եկամուտ, հարկային պարտավորություն ԱԱՀ-ի գծով և կոմիտենտին հասանելիք գումարի նվազեցում:

Կոմիտենտն պարտավոր է, բացի կոմիսիոն վարձատրությունից, իսկ համապատասխան դեպքերում՝ նաև դեկրեդերի համար լրացուցիչ վարձատրությունից, կոմիսիոններին հատուցել պայմանագրի կատարման հետ կապված նրա ծախսերը:

Կոմիսիոնները կոմիտենտի՝ իր մոտ գտնվող ապրանքի պահատվության համար ծախսերի հատուցման իրավունք չունի, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Կոմիտենտն իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ վերացնելով կոմիսիոններին տրված հանձնարարությունը: Կոմիսիոններն իրավունք ունի պահանջել հատուցելու հանձնարարության վերացմամբ իր կրած վնասները:

Կոմիսիոններն իրավունք չունի, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, հրաժարվել պայմանագիրը կատարելուց, բացառությամբ այն դեպքի, երբ այն կնքվել է առանց գործողության ժամկետը նշելու: Այդ դեպքում կոմիսիոնները ոչ ուշ, քան երեսուն օր առաջ պետք է կոմիտենտին ծանուցի պայմանագրի դադարման մասին, եթե ծանուցման առավել երկար ժամկետ նախատեսված չէ պայմանագրով:

Բերենք կոմիսիոն հիմունքով վաճառքի հանձնվող ապրանքի թվային օրինակ՝ տալով համապատասխան հաշվապահական ձևակերպումներ:

Օրինակ. «Ա» ընկերությունը կոմիսիոն հիմունքով վաճառքի է հանձնում «Բ» ընկերությանը հեռուստացույց 10 հատ, յուրաքանչյուր միավորի ինքնարժեքը՝ 180000 դրամ, սահմանելով վաճառքի գին 300000 դրամ և տեսամազնիտոֆոն 8 հատ, որոնց ինքնարժեքը և վաճառքի գները կազմում են համապատասխանաբար 150000 դրամ և 240000 դրամ: «Ա» և «Բ» ընկերությունները գտնվում են երկրի ներսում և չկապակցված կողմեր են:

Տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումներ.

ա) կոմիտենտի («Ա» ընկերություն) կողմից

-պայմանագրի համաձայն հանձնված ապրանքների ելքագրումը՝

ԴԲ 2164 «Կոմիսիոններ և կոմիսիոն հիմունքներով վաճառքի հանձնված
ապրանքներ» 3000000 դրամ

ԿԲ 2161 «Ապրանքներ պահեստում» 3000000 դրամ

բ) կոմիսիոնների («Բ» ընկերություն) կողմից

-պայմանագրի համաձայն ստացված ապրանքների մուտքագրումը՝
մուտքագրվում է 924 «Հանձնուրդի (կոմիսիայի) և հանձնարարության (կոնսիգնացիայի)
պայմանագրերով ընդունված ապրանքներ» 4920000 դրամ.

Պայմանագրով սահմանված կարգով կոմիսիոները կոմիտենտին է ներկայացնում
տասնօրյակում վաճառված ապրանքների վերաբերյալ հաշվետվություն, ըստ որի վաճառել է 3
հատ հեռուստացույց և 4 հատ տեսամագնիստոֆոն: Պայմանագրով սահմանվել է կոմիսիոն
վճարի չափը՝ վաճառքի ընդհանուր գումարի 10 տոկոս:

Տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումներ.

ա) կոմիտենտի կողմից

- վաճառված ապրանքների գծով դեբիտորական պարտքի արտացոլումը՝

ԳԲ 2211 «Առևտրական դեբիտորական պարտքեր չկապակցված կողմերի գծով՝
երկրի ներսից ստացվելիք» 1860000 դրամ

ԿՐ 6112 «Ապրանքների վաճառքից հասույթ» 1550000 դրամ

ԿՐ 5243 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին՝ ավելացված
արժեքի հարկի գծով» 310000 դրամ

-իրացված ապրանքների ինքնարժեքի արտացոլումը՝

ԳԲ 7112 «Վաճառված ապրանքների ինքնարժեք» 1140000 դրամ

ԿՐ 2164 «Կոնսիգնացիոն և կոմիսիոն հիմունքներով վաճառքի հանձնված
ապրանքներ» 1140000 դրամ

-կոմիսիոն վճարի արտացոլումը՝

ԳԲ 7128 «Կոմիսիոն վճարներ» 155000 դրամ

ԳԲ 2261 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա ավելացված արժեքի հարկ»
31000 դրամ

ԿՐ 2211 «Առևտրական դեբիտորական պարտքեր չկապակցված կողմերի գծով՝
երկրի ներսից ստացվելիք» 186000 դրամ

բ) կոմիսիոների կողմից

-ելքագրվում է 924 «Հանձնուրդի (կոմիսիայի) և հանձնարարության (կոնսիգնացիայի)
պայմանագրերով ընդունված ապրանքներ» 1860000 դրամ

-մատուցված ծառայության արտացոլումը՝

ԳԲ 5324 «Այլ ընթացիկ պարտավորություններ կոմիսիայի պայմանագրերով ընդունված ապրանքների գծով»	186000 դրամ
ԿՐ 6114 «Ծառայությունների մատուցումից հասույթ»	155000 դրամ
ԿՐ 5243 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտք բյուջեին՝ ավելացված արժեքի հարկի գծով»	31000 դրամ

Կոմիսիոները ապրանքների վաճառքից կանխիկ գումարը՝ ընդամենը 1860000 դրամ, մուտքագրում է իր դրամարկղ, այնուհետև պահելով իր մոտ կոմիսիոն վճարի գումարը՝ տարբերությունը՝ 1674000 դրամ, վճարում է կոմիտենտին:

Տրվում են հետևյալ հաշվապահական ձևակերպումներ.

ա) կոմիսիոների կողմից

-ապրանքների վաճառքից կանխիկ գումարի մուտքագրման արտացոլումը

ԳԲ 2511 «Ազգային արժույթի դրամարկղ» 1860000 դրամ

ԿՐ 5324 «Այլ ընթացիկ պարտավորություններ կոմիսիայի պայմանագրերով

ընդունված ապրանքների գծով» 1860000 դրամ

-կոմիտենտին վճարված հասանելիք գումարի արտացոլումը

ԳԲ 5324 «Այլ ընթացիկ պարտավորություններ կոմիսիայի պայմանագրերով

ընդունված ապրանքների գծով» 1674000 դրամ

ԿՐ 2511 «Ազգային արժույթի դրամարկղ» 1674000 դրամ

բ) կոմիտենտի կողմից

-կոմիսիոների կողմից կանխիկ դրամով դեբիտորական պարտքի մարման արտացոլումը

ԳԲ 2511 «Ազգային արժույթի դրամարկղ» 1674000 դրամ

ԿՐ 2211 «Առևտրական դեբիտորական պարտքեր չկապակցված կողմերի գծով՝

երկրի ներսից ստացվելիք» 1674000 դրամ

Թաթուլ Մովսիսյան
«Էկոնոմիկա և իրավունք» 11.1999